

● Գործը սկսելիս պետք է գնահատել, թե կորուստների ինչպիսի տեսակներ են առավել հնարավոր եւ հավանական գործարարության տվյալ տեսակում, ինչպիսին է դրանց սպասվող մեծությունը, որքան հաճախ դրանք կարող են ծագել:

● Առանձնապես չպետք է սարսափել կորուստներից, որոնց մեծությունը չի գերազանցում հաշվարկային սպասվող շահույթը, նման կորուստները սկզբունքորեն թույլատրելի են, բայց դրանք չպետք է լինեն շատ հաճախ, դրանց հավանականությունը պետք է եապես փոքր լինի մեկից:

● Սպասվող կորուստները, որոնք ծագման շոշափելի հավանականություն ունեն, եւ սպառնացող վնասները, որոնք եապես գերազանցում են շահույթը, պետք է զգաստացնեն ձեռնարկատիրոջը: Այս դեպքում անհրաժեշտ է ստեղծել ապահովագրության հատուկ պահուստային ֆոնդ եւ հստակ պատկերացնել, թե ինչպիսի արդյունքներից պետք է փոխհատուցվեն կորուստները՝ դրանց ծագման դեպքում:

● Եթե ձեռնարկատերը խիզախելով գնում է բավականաչափ հավանական կորուստների ռիսկի, որը զգալի գերազանցում է շահույթը եւ ի վիճակի է նրան ֆինանսական խոշոր վնաս հասցնել, ապա ձեռնարկատերը պարտավոր է ապահովագրել իրականացվող գործունեությունը: Ռիսկի ապահովագրությունը դրա նվազեցման լավագույն միջոցներից մեկն է, բայց այն կապված է նոր կորուստների հետ՝ ապահովագրական վճարների տեսքով, որոնք պետք է համապատասխանեն ձեռնարկատիրոջ կարողությանը: Կարելի է ապահովագրել գույքը, առեւտրային գործունեությունը, բեռների փոխադրումը, առողջությունը, կյանքը:

● Կրիտիկական ռիսկի առկայության դեպքում, համաձայն պայմանագրի, ցանկալի է ռիսկը բաժանել գործունեության բոլոր մասնակիցների միջեւ այնպես, որ համընդհանուր ուժերով հնարավոր լինի փոխհատուցել հնարավոր կորուստները:

● Պետք է խուսափել արեւտայի ռիսկի հետ կապված գործերից,

քանի որ այս կորուստները ձեռնարկատերն ի վիճակի չէ փոխհատուցել: Այսպիսի կորուստների հավանականությունը պետք է լինի այնքան փոքր, որ այն հաշվի չառնվի (գրոյին մոտ): Հակառակ դեպքում անթույլատրելի է նման գործ սկսելը:

Ռիսկի նվազեցման տարբեր մեթոդների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ռիսկի նվազեցմանն ուղղված յուրաքանչյուր միջոցառում ունի իր «գինը»: Գործնականում առավել արդյունավետ արդյունք կարելի է ստանալ միայն ռիսկի նվազեցման տարբեր մեթոդների համալիր օգտագործման ժամանակ:

Օգտագործված գրականություն

1. Гарантуров В., Экономический риск, М.: Дело и сервис, 1999.
2. Ареопар - м. Управление предпринимательскими рисками, http://www.areopar.ru/
3. Е. Гаїкова, А. Шубин, Сколько стоит эффективное управление?, Экономика и жизнь, 11.09.2002, #172.
4. Хохлов Н.В., Управление риском, Учебное пособие, 2001.
5. Любушкин Н.П., Лещева В.Б., Дьякова В.Г., Анализ финансово-экономической деятельности предприятия, Уч. пособие для вузов, Под ред. проф. Н.П. Любушина, М.: ЮНИТИ - ДАНА, 2002, 471 с.
6. Устенко О.А., Теория экономического риска, К. 1997, с. 310.
7. Венциель Е.С., Теория вероятностей, М. 1999, с. 312.
8. Гранберг А.Г., Статистическое моделирование и прогнозирование, М. 1995, с. 220.
9. Глушенко В.В., Управление рисками. Страхование, М. 1999, с. 336.
10. Скамай Л.Г., Способы реакции коммерческой организации на возникающие в процессе осуществления предпринимательской деятельности риски, http://www.risk-management.ru/arhiv.htm
11. Lubatkin M., Rogers R., Systematic Risk and Shareholder Return: a Capital market, Academy of Management Journal, 1997, #4.

Շուկայական հարաբերություններին անցնելու նպատակով ՀՀ-ում սկսված տնտեսական բարեփոխումների գործընթացում, խոր անկման շրջանը հաղթահարելուց հետո, արդեն մեկ հնգամյակից ավելի արձանագրվում է երկնիչ տնտեսական աճ (աղյուսակ 1): Այդ միտումը շարունակվեց նաեւ 2007թ., եւ Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը կազմեց 3139.4 մլրդ դրամ՝ 13.7%-ով գերազանցելով 2006թ. ցուցանիշը:

Տնտեսության կայուն զարգացումն այսօր առաջնահերթ խնդիր է անցումային տիպի տնտեսություններում, որտեղ բոլոր ուղղություններով միաժամանակ ներդրումներ կատարելու հնարավորությունները սահմանափակ են, իսկ լրացուցիչ միջոցների ստեղծման միակ աղբյուրը տնտեսական զարգացումն է:

Իրականացված համակարգային վերափոխումների արդյունքում այսօր Հայաստանն ունի տնտեսավարման ազատական արժեքային համակարգով կայացած, միջազգային կառույցների հետ համագործակցող, որոշակիորեն դիվերսիֆիկացված տնտեսություն: Տնտեսական ազատականության վարկանիշային դասակարգմամբ՝ «Կառավարությունից ազատականություն» ցուցա-

նիշով Հայաստանի մակարդակը 2007թ. համար գնահատվել է 91.6% (առավելագույնը՝ 100%): Երկրում մասնավոր հատվածի կայացումն է վկայում ՀՆԱ ցուցանիշում մասնավոր հատվածի բարձր տեսակարար կշիռը (այդ ցուցանիշը 2006թ. կազմել է մոտ 85%) [1, էջ 10-11]:

Վերափոխումների արդյունքում ձեռք բերված հաջողություններն ակնհայտ են, բայց երկրում շուկայական համակարգի լիարժեք կայացման համար գործող շուկայական ինստիտուտներն ունեն անբավարար մակարդակ: Որոշ կառույցներ՝ ֆորմալ գործունեության պատճառով, լիարժեք չեն իրականացնում այն խնդիրները, որոնց լուծման համար ձեռավորվել են:

Ստեղծված իրավիճակը ներքին շուկայի փոքր տարողության պայմաններում, մեծացնելով ռիսկի աստիճանը տնտեսության մեջ, եապես դժվարացնում է տնտեսավարող սուբյեկտների կողմից հիմնավորված արդյունավետ որոշումների ընդունումը, զսպում է տնտեսական առաջընթացը եւ մրցունակության մակարդակը:

Ժամանակակից տնտեսական պայմաններում տնտեսավարող սուբյեկտների համար մեծ վտանգ են անբարեխիղճ մրցակիցները

ՁեռնարկաՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԳՐԱՆՅՆ ԵՎԱԶԵՅՄԱՆ ՌԻԴԻՆԵՐԸ

Հասմիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ

Եւ պայմանադիր կողմերը, քրեական կառույցների ազդեցությունը, պետության քրեախրավական եւ տնտեսական քաղաքականության թերությունները, ինչպէս նաեւ արդյունաբերական լրտեսությունը, համակարգչային տեխնոլոգիաների կիրառման ոլորտում կատարվող հանցագործությունները, քրեական մրցակցությունը [6]:

ՀՀ-ում տնտեսական մրցակցության պաշտպանությունը կարգավորվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով [2], որը կանոնակարգում է հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահման, համակենտրոնացումների եւ անբարեխիղճ մրցակցության բնագավառները: Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, ստեղծված պատասխանատու լիազոր մարմինը՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, կարգավորում է մրցակցության պաշտպանության քաղաքականությունը երկրում:

Օրենքը բարելավելու նպատակով կատարվել են մի շարք փոփոխություններ, բայց կան դրույթներ, որոնք տարբերվում են ԵՄ չափանիշներից, մասնավորապէս՝ համակենտրոնացումների հայտարարագրման համար անհրաժեշտ նախապայմանները: ԵՄ-ն որպէս համակենտրոնացումների հայտարարագրման չափանիշ հիմք է ընդունում տնտեսավարողների իրացման ծավալները, իսկ ՀՀ-ում, ըստ վերոնշյալ Օրենքի, որպէս հայտարարագրման չափանիշ հիմք է ընդունվում համակենտրոնացման մասնակիցների ակտիվների արժեքը:

Սա բացատրվում է ՀՀ տնտեսության անցումային բնույթով, երբ ձեռնարկությունների մեծ մասն իրենց կարողությունները ամբողջությամբ չեն օգտագործում: Չօգտագործված կարողությունները համակենտրոնացումից հետո կարող են մեծացնել մասնակիցների հնարավորությունները՝ ընդլայնելով նրանց մասնաբաժինը շուկայում եւ ազդելով մրցակցային վիճակի վրա: Զանազան համակենտրոնացման հիմքում ընկած է ակտիվների միավորումը, այս փուլում նպատակահարմար է դրանց դիտարկումը գերիշխող դիրքի հանգեցման տեսանկյունից:

Չարկ է նշել, որ համակենտրոնացումների հայտարարագրման չափանիշը պետք է արտահայտի մասնակիցների իրական ներուժը կոնկրետ ապրանքային շուկաներում, հետեւաբար՝ նպատակահարմար է որպէս չափանիշ ապրանքաշրջանառության ծավալների ընտրությունը:

Մինչեւ 2007թ. կատարված փոփոխությունները, սույն Օրենքը չէր նախատեսում պետության կողմից տնտեսավարողներին տրվող աջակցության կարգավորում՝ տնտեսական մրցակցության վրա դրա ազդեցության տեսանկյունից: Օրենքում կատարված փոփոխությունների շնորհիվ Հանձնաժողովին իրավունք է վերապահվել վերահսկել պետական աջակցությունը երկրում:

Օրենքի ընդունումից հետո կատարված մի շարք փոփոխությունները խստացրել են Հանձնաժողովի կողմից արձանագրվող խախտումների դեմ կիրառվող պատժամիջոցները: Մասնավորապէս՝ 2005թ. հակամրցակցային որոշ դրույթումների համար տուգանքի չափը սահմանված գումարից փոխարինվեց որպէս տոկոս տվյալ ապրանքային շուկայում իրականացված շրջանառությունից (աղյուսակ 2), իսկ 2007թ. կատարված փոփոխությունները էլ ավելի խստացրին Օրենքի խախտման դեպքում նախատեսված պատժամիջոցները:

Հանձնաժողովը պատժամիջոցներ է նախատեսում նաեւ անօրինական պետական աջակցության դեպքում: Չնայած դա հակասում է պետական աջակցություն տրամադրելու տրամաբանությանը, բայց նպատակ ունի կրճատել կոռուպցիոն ռիսկերը պետական աջակցության շահառու եւ տրամադրող հարաբերություններում:

ՀՀ-ում պետական աջակցությունը հիմնականում տրամադրվում է փոքր եւ միջին ձեռնարկություններին, գյուղատնտեսությանը, գազի մատակարարմանը, ազգային հեռուստաընկերությանը, առողջապահությանը, կրթությանը, տպագիր մամուլին: 2006թ. այդ ցուցանիշը կազմել է ՀՆԱ-ի 6.6%-ը (օժանդակության ծավալների գերակշիռ մասը բաժին է ընկել գյուղատնտեսությանը): Համեմատության կարգով նշենք, որ այս ցուցանիշը ԵՄ 15 երկրներում կազմել է 0.6%: Հայաստանի տնտեսությունը գլոբալ մրցունակության համարվելով (Համաշխարհային տնտեսական ֆորում) դասակարգված 125 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ տեղը: Այս առումով զսպող գործոններ են հանդիսացել «Խնստիտուցիոնալ համակարգը»՝ 84-րդ տեղով, «Ենթակառուցվածքը»՝ 92-րդ տեղով, «Շուկայի արդյունավետությունը»՝ 104-րդ տեղով [1, էջ17]:

Շուկայական ինստիտուտների լիարժեք կայացումը Հայաստանին թույլ կտա ինտեգրվել համաշխարհային տնտեսության եւ մեղմել ներքին շուկայի նեղությունը, ռիսկային բարձր աստիճանով պայմանավորված դժվարությունները:

Անցումային տնտեսություններում խիստ արդիական է անկատար օրենսդրության խնդիրը, որը բառացիորեն կապանքների մեջ է դնում «սպիտակ» ձեռնարկությունների գործունեությունը եւ բարեհաճ հիմք է հանդիսանում «ստվերային» ձեռնարկությունների համար: Ձեռնարկությունների համար շահավետ չեն «սպիտակ» սխեմաները, ավելի հաճախ հանդիպում են կիսալեգալ «մութագույն» եւ անլեգալ «սեւ» սխեմաներ: Ձեռնարկությունների համար գործունեության լեգալ սխեմաներին անցում կապված է այնպիսի ծախքերի հետ, որոնց մակարդակը շատ բարձր է, իսկ շատ դեպքերում արգելիչ բնույթ է կրում [7]:

Գաղտնիք չէ, որ ՀՀ տնտեսության որոշ ոլորտներում չափազանց մեծ է ստվերային տնտեսության տեսակարար կշիռը: Ստվերային տնտեսությունը կազմում է ՀՆԱ 1/3-ը: Պատճառը հարկերի հավաքագրման ցածր մակարդակն է եւ հարկային մուտքերի ոչ օպտիմալ կառուցվածքը: Դա աղավաղում է համապատասխան ապրանքային շուկաների մրցակցային վիճակի իրական պատկերը: Ապացույցն այն է, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կատարած ուսումնասիրությունների արդյունքները կոնկրետ ապրանքային շուկաներում իրականությանը չեն համապատասխանում, քանի որ շուկայի ծավալները հստակ որոշված չեն:

Ստվերային տնտեսությունը խոչընդոտում է երկրում գուտ մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացումը: Իր գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով Հանձնաժողովը եւս հայտնաբերում է ստվերում գործող տնտեսավարող սուբյեկտներին՝ աջակցելով ստվերային տնտեսության դեմ պայքարող երկրի իրավասու մարմիններին:

Վերջին տարիներին հարկեր/ՀՆԱ հարաբերության դրական տեղաշարժ է նկատվում: Ընդհանրապէս՝ արտադրանքի գուտ հարկերի իրական ծավալների միտումները դիտարկելիս նկատվում են երեք տիպի զարգացումներ: 2000-2002թթ. գուտ հարկերի աճը գերացանցել է ՀՆԱ-ի աճը՝ միջինը 5.4%-ով, 2003-2004թթ.՝ ՀՆԱ-ի աճին զիջել է միջինը 7.1%-ով: Իսկ 2005 եւ 2006 թվականներին արտադրանքի գուտ հարկերի աճի տեմպը՝ համապատասխանաբար կազմելով 12.4 եւ 11.2%, մոտ է ՀՆԱ-ի համապատասխան ցուցանիշին (13.9 եւ 13.3%): 2006թ. ՀՆԱ-ում գուտ հարկերի տեսակարար կշիռը՝ 8.2%, Հայաստանը զիջում է ԵՄ բոլոր երկրներին առանձին վերցրած (2006թ. ՀՆԱ-ում արտադրանքի գուտ հարկերի կշիռը ԵՄ 27 երկրների միջին ցուցանիշը կազմել է մոտ 11.1%):

Չնայած նկատվող դրական տեղաշարժերին, ստվերային տնտեսության դեմ պայքարում առաջին հերթին պետք է կատարելագործվի վարչարարությունը հարկային դաշտում: Կոռուպցիոն ռիսկերի բարձր աստիճանը, խոչընդոտելով ազատ մրցակցության ապահովումը, նվազեցնում է գործարար միջավայրի գրավչությունը: Կոռուպցիայի ընկալման համարվելով (2.9) դասակարգված (Թրանսփերենսի Ինդեքսը) 163 երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է 93-րդ տեղը [1, էջ17]:

ՀՀ-ում ձեռնարկուի համար, որն արտադրում է սպառողական պահանջարկ ունեցող ապրանքներ, երկրի ներսում սեփական արտադրանքը չիրացնելու ռիսկը մեծ վտանգ չի ներկայացնում: Դա երեւում է 2001-2006թթ. սպառողական գների փոփոխության դիտարկումից (գծապատկեր1):

Սպառողական գների միջին տարեկան ինդեքսը 2006-ին կազմել է 2.9%, որը 2.3%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: 2006թ. սպառողական ապրանքների գների աճի ցուցանիշով Հայաստանը ԿՊՀ եւ ԵՄ անդամ մի շարք պետությունների համապատասխան ցուցանիշների շարքում չորրորդն է՝ 2.9%: Միաժամանակ՝ միջին տարեկան գնաճի մակարդակով 2002-06թթ. նորից չորրորդ տեղում է՝ 3.2%, որը 0.6%-ով գերազանցում է ԵՄ 27 երկրների միջին գնաճի ցուցանիշը:

Ձեռնարկուի համար այսօր ՀՀ-ում մեծ է արտաբերության ռիսկը՝ ի տարբերություն սեփական արտադրանքը չիրացնելու ռիսկի: ՀՀ-ում 2004-06թթ. դրամի էական արժեքավորումը՝ հիմնական գրեթե բոլոր արժույթների եւ հատկապէս ԱՄՆ դոլարի նկատմանը, զգալի ազդել է Հայաստանում ԱՄՆ դոլարի գնողունակության վրա: Եթե 2003թ. գնողունակության համարժեքությունն ապահո-

ՀՆԱ-ի ցուցանիշները Հայաստանում 2001-2006թթ.² Աղյուսակ 1.

	2001	2002	2003	2004	2005	2006	2006-ը 2001-ի նկատմամբ, %
ՀՆԱ (մլրդ դրամ)	1 175.9	1 362.5	1 624.6	1 907.9	2 242.9	2 657.1	226.0
ՀՆԱ (մլն ԱՄՆ դոլլար)	2 118.4	2 376.3	2 807.1	3 576.6	4 900.4	6 386.7	301.5
ՀՆԱ (մլն եվրո)	2 365.1	2 164.1	2 485.0	2 880.9	3 932.2	5 147.5	217.6
ՀՆԱ իրական աճ (%)	9.6	13.2	14.0	10.5	13.9	13.3	184.1

Օրենքի խախտումների դեմ կիրառվող պատժամիջոցները³ Աղյուսակ 2.


Օրենքի խախտման դեպքեր	տուգանքի չափը որպես տոկոս շրջանառությունից	տուգանքի առավելագույն չափը
Հակամրցակցային համաձայնություններ	2%	ոչ ավելի, քան 300 մլն դրամ
Անօրինական համակենտրոնացումներ	4%	ոչ ավելի, քան 500 մլն դրամ
Գերիշխող դիրքի չարահիում	2%	ոչ ավելի, քան 300 մլն դրամ
Անբարեխիղճ մրցակցություն	-	500 հազ. դրամ, 1 տարվա ընթացքում կրկնվելու դեպքում՝ 1 մլն դրամ
Ոչ հավաստի տեղեկությունների տրամադրում կամ տեղեկությունների չտրամադրում	-	500 հազ. դրամ, 1 տարվա ընթացքում կրկնվելու դեպքում՝ 2 մլն դրամ
Հանձնաժողովի աշխատանքների խոչընդոտում	-	500 հազ. դրամ

Այսինքն, ապա 2006թ. ներմուծման ծավալների իրական աճը գերազանցում է արտահանման ծավալների իրական աճը՝ 10.2%-ով: Կանխատեսվում է, որ դրամի արժեքավորման գործընթացը կշարունակվի առաջիկա տարիներին, արդյունքում (այլ հավասար պայմանների դեպքում) կխորանա արտահանման եւ ներմուծման ծավալների միջեւ տարբերությունը:

Սովորաբար ձեռնարկությունների համար մեծ ռիսկ է սղաճը, այսինքն՝ սղաճի հետեւանքով ներդրումներից ստացվող իրական եկամուտների փոքրացումը: Հայաստանում սղաճի հետ կապված ռիսկը փոքր է, ինչը երեւում է ՀՆԱ ինդեքս-դեֆլյատորի դինամիկայից (աղյուսակ 4):

ՀՀ տնտեսության աճի բավական բարձր տեմպերը հաջողվել է ձեռք բերել պարաբերականորեն կայուն գնաճի պայմաններում: Դա նպաստել է տնտեսական կայունությանը, ինչը վկայում են նաեւ ընդհանուր օտարերկրյա ներդրումների ծավալների աճի միտումները:

Պարենային եւ ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների գնաճը Հայաստանում (%) Գծապատկեր 1.



վող գործակիցը Հայաստանի համար կազմում էր 3.94, ապա 2005թ. այն արդեն 3.08 էր, իսկ 2006-ին՝ 2.81: 2006թ. դրամը ԱՄՆ դոլլարի նկատմամբ արժեքավորվել է 9.1%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 8.5%-ով: Վերջին երկու տարիներին ՀՀ դրամը ԱՊՀ եւ եվրոպական երկրների արժույթների համեմատ ամենամեծ արժեքավորումն է ունեցել:

Ստեղծված իրավիճակում անխուսափելի է դառնում արտահանման եւ ներմուծման գործառույթներ իրականացնող եւ իրենց արտադրությանն ռեսուրսները մշտապես ԱՄՆ դոլլարով պահող ձեռնարկությունների կոնվերսիոն կորուստները: Զանի որ եվրոգոտու ձեռնարկությունների հետ արտահանվող եւ ներկրվող գործառույթների ծավալը աճելու միտում ունի, անխուսափելի է նաեւ եվրոյով հաշվարկվող ապրանքների դիմաց մաքսային վճարների համար կատարվող ծախսերի աճը: ՀՀ-ում 2006թ. ԵՄ երկրների կշիռը արտահանման մեջ կազմել է՝ 47% (2005-ի համեմատ աճել է 3.2%), իսկ ներմուծման մեջ՝ 30.2% (2005-ի համեմատ նվազել է 2.7%-ով, բայց դարձյալ կազմել է ընդհանուր ներմուծման 1/3-ը):

Արտահանման եւ ներմուծման ծավալների փոփոխության միտումների դիտարկումը 2003-2006թթ. (աղյուսակ 3) ցույց է տալիս, որ եթե արտահանման ծավալները 2006թ. գերազանցել են 1 մլրդ ԱՄՆ դոլլարի սահմանագիծը, ապա ներմուծումը գերազանցել է 2 մլրդ ԱՄՆ դոլլարի սահմանագիծը: Ավելի՛ն՝ եթե արտահանման իրական ծավալներն անկում են գրանցել, ապա ներմուծման ծավալները շարունակել են աճել:

2006թ. արտահանման եւ ներմուծման իրական աճերի միջեւ դիտվող օրինաչափությունը կորույս կորցրել է. եթե նախորդ երեք տարիների ընթացքում արտահանման իրական աճի ցուցանիշը գերազանցել է ներմուծման համապատասխան տարվա ցուցա-

նեցի աճի միտումները: Ընդհանուր օտարերկրյա ներդրումները 1998-2005թթ. կազմել են 2260 մլն դոլլար (աճի միջին տեմպը՝ 131.7%), որից ուղղակի ներդրումները՝ 71.2% (աճի միջին տեմպը՝ 125.6%): Համախառն ներդրումները ՀՆԱ-ում 2005թ. կազմել են 26.3%: Այդ թվականին ՏՀԶԿ փորձագիտական խմբի որոշմամբ ՀՀ ռիսկայնության վարկանիշը դրական փոփոխություն կրեց (7-րդ խմբից տեղաշարժելով 6-րդ): «Ներդրումային ազատություն» ցուցանիշով Հայաստանի մակարդակը 2007թ. համար գնահատվել է 60% [1, էջ 10-11]:

Գործարարության զարգացումը խոչընդոտող արգելքները թվարկելիս ձեռնարկության ղեկավարները առաջին հերթին նշում են հիմնական միջոցների մաշվածությունը, երկրորդ՝ հարկադրման բարձր մակարդակը, երրորդ՝ կարային պակասը, որի լուծումը դառնում է անհիմաստ, երբ միջոցներն անբավարար են: Գործարարության համար բավարար միջոցների ֆինանսավորման ժամանակ ծագող ներդրումային ռիսկերի նվազման վրա հիմնականում ազդում է բիզնեսի ֆինանսավորման ձևը: Դա կարող է լինել վարկ, լիզինգ, սեփական միջոցներ, գործընկերոջ մասնակցություն եւ այլն [8]:

Հայաստանում ֆինանսական շուկայում բարձր իրական տոկոսադրույթների ամպայությունը թուլացնում է ներդրումների խթանը: 2000թ. սկսած վարկային տոկոսարդույթն անընդհատ նվազում է՝ 2000-ի համեմատ 2006թ. այդ ցուցանիշը նվազել է 15%-ով եւ կազմել է 16.5% (աղյուսակ 5), որի արդյունքում վերջին տարիներին նաեւ նվազել է վարկերի եւ ավանդների միջեւ տոկոսադրույթների տարբերությունը՝ 1.5%-ով:

Չնայած տոկոսադրույթների միջեւ տարբերությունը նվազել է, բայց այն դեռեւս բարձր է՝ 10.8%, եւ բանկային համակարգի կողմից մասնավոր հատվածին տրվող վարկային ծավալները փոքր են: Զանի որ գործարար հատվածի վարկավորումը կապված է ավելի մեծ ռիսկի հետ, բանկերի համար նախընտրելի է ներդրումներ կատարել բարձր իրացվելիության ակտիվներում: Ուսափելով գործարար հատվածի վարկավորումից՝ բանկերը ներդրումների սահմանափակությունը վարկավորման փայտեթում փոխհատուցում են տոկոսադրույթների մեծ տարբերության հաշվին:

Հայաստանում 2006թ. վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 9.1%, ինչը վկայում է գործարար հատվածի անբավարար վարկավորում: Վարկերի մատչելիության համապատասխան գնահատմամբ Հայաստանը զբաղեցնում է 65-րդ տեղը 175 երկրների մեջ [1, էջ17]:

Երկրում գործարար միջավայրի բարելավման միջոցով ներդրումների աճ (մասնավորապես օտարերկրյա ներդրումների աճ՝ անորագային ընկերությունների մասնակցությամբ) ապահովելու համար անհրաժեշտ է կատարելագործել երկրի օրենսդրական եւ ինստիտուցիոնալ դաշտը, վարչարարությու-

Արտահանման և ներմուծման ծավալների փոփոխության միտումները 2003-2006թթ. Աղյուսակ 3.

Արտահանում ընթացիկ (մլն դոլլար)	Արտահանման անվանական աճ (%)	Արտահանման իրական աճ (%)	Ներմուծում ընթացիկ (մլն դոլլար)	Ներմուծման անվանական աճ (%)	Ներմուծման իրական աճ (%)
2003	685.6	35.7	26.5	1 279.5	24.0
2004	722.9	5.4	-3.3	1 350.7	-8.6
2005	973.9	34.7	20.4	1 801.7	10.8
2006	1004.0	3.1	-6.6	2 194.7	3.6

Եներգասպառման ծավալները՝ փոքր, իսկ դա մեծացնում է լրացուցիչ ներդրումների ռիսկի աստիճանը: Եներգահամակարգի հետագա տրամադրվող գործունեության համար անհրաժեշտ է արդիականացնել արտադրական հզորությունները, ապահովել համակարգի անվտանգ, հուսալի և կայուն աշխատանքը:

ՀՆԱ ինդեքս-ընթացատրի դինամիկան 2001-2007թթ. Աղյուսակ 4.

ՀՆԱ ինդեքս-ընթացատր (%)	2001	2002	2003	2004	2005	2006	2007
	104.0	102.3	104.7	106.0	103.1	104.8	103.9

և, հստակեցնել շուկա մուտքի և ելքի պայմանները: Ձեռնարկատիրական ռիսկի աստիճանը նվազեցնող միջոցառումների անբաժան մասը ձեռնարկատիրական ռիսկի պահովագրությունն է: Որպես կանոն, ապահովագրական ընկերությունը տրամադրում է ապահովագրական վճար վերջնական գնորդի չվճարման ռիսկի դիմաց՝ ըստ վճարման հետաձգում նախատեսող պայմանագրերի:

Հայաստանում գործող ապահովագրական կառույցների գործունեությունը շուկայական մյուս ինստիտուտների նման եղել է անբավարար և ավելի շատ ֆորմալ բնույթ է կրել: 2007թ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» նոր օրենքի [3] ընդունումը նպաստակ է հետապնդում կարգավորել այս կառույցների գործունեությունը: Մասնավորապես՝ 2009թ. նախատեսվում է առևտրային բանկերի համար ներդնել պարտադիր ապահովագրություն:

Սույն օրենքի ընդունումից հետո ապահովագրական 6 ընկերություններ փակվել են: 2007թ. գործել են 9 ընկերություններ, որոնց կնքած պայմանագրերի թիվն անցել է 38 հազարից, որը 30%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը: Շուկայական այս ինստիտուտի կայացումը, նվազեցնելով ձեռնարկատիրական ռիսկի աստիճանը, կմեծացնի երկրի գործարար միջավայրի գրավչությունը:

Բիզնեսն առավել թափանցիկ դարձնելու և ռիսկերը կրճատելու նպատակով բիզնեսի ռեգերվատի քաջահայտումը հնարավոր է նաև մարքեթինգային հետազոտության և տվյալ բիզնեսի գնահատականների միջոցով: Այսօր Հայաստանում գործարար կառավարման մակարդակը շատ ցածր է, ինչը դանդաղեցնում է երկրում գործարար ռիսկերը կրճատելու գործընթացը: «Գործարար իրավաձեռնության» ցուցանիշով Հայաստանը 125 երկրների շարքում զբաղեցնում է 104-րդ տեղը [1, էջ 19]: Պատճառն այն է, որ գործարար շրջանակներում անտեսվում է ռազմարական պլանավորման, ֆինանսական միջոցների, աշխատակազմի և որակի արդյունավետ կառավարման, նաև շուկաներում համապատասխան մարքեթինգային գործելակերպը:

Կան նաև այլ վտանգներ, օրինակ՝ կապված ռեսուրսային բազայի, մասնավորապես՝ վառելիքաէներգետիկ ռեսուրսների սակավության հետ: Վառելիքաէներգետիկ պաշարների պակասի պատճառով երկրի էներգետիկ համակարգը մշտապես կախվածության մեջ է արտաքին աղբյուրներից: Բացի այդ, մեծ է այս համակարգի մաշվածության աստիճանը: Էլեկտրակայանների, ՋԷԿ-երի, ՀԷԿ-երի հիմնական սարքավորումները շահագործվել են 30 և ավելի տարիներ: Այսօր դրանց տեխնիկատնտեսական ցուցանիշները, ինչպես նաև բնապահպանական ցուցանիշները չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին:

Արդյունքում՝ համակարգում իրացման կորուստները մեծ են, իսկ

Երկրում գործարարության զարգացման խոչընդոտ է նաև հեռահաղորդակցության համակարգի վիճակը, որը զսպում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը: Մասնավորապես՝ Ինտերնետ կապի որակն անբավարար է, տրամադրվող կապի գները՝ բարձր: Այսօր Ինտերնետի լայն տարածման և հասանելիության շնորհիվ նույնիսկ ոչ մեծ ֆիրմաները կարող են խուսափել շատ ռիսկերից, օրինակ՝ արտադրանքը չիրացնելու ռիսկից: Ինտերնետը թույլ է տալիս հեշտույթային գտնել գործընկերներ, բացի այդ՝ այստեղ կան ձեռնարկունեի համար անհրաժեշտ տեղեկություններ (ապահովագրություն, կառավարում, իրացման շուկաների որոնում):

Միջկրպորատիվ էլեկտրոնային առևտրում կիրառվող նոր տեղեկատվական տեխնոլոգիաները հանգեցնում են ինչպես ուղղակի մեծաքանակ գնման ծախսերի, այնպես էլ ապրանքների ձեռնարկման, հաշվառման և առաքման հետ կապված ծախսերի իջեցման: Դա ձեռնարկություններին թույլ է տալիս ունենալ ավելի քիչ նյութատեխնիկական պաշարներ և մեծ արդյունավետությամբ արձագանքել պահանջարկի փոփոխության վերաբերյալ տեղեկությանը՝ նվազեցնելով ապրանքակուտակման ռիսկը: Այս ամենի շնորհիվ կատարվող ինսայդությունը, ըստ Morgan Dean Witter Internet Research գնահատականի, տարբեր սեկտորների ձեռնարկությունների համար կազմում է 15-50% [9]:

Գիտելիքահենք տնտեսության համալսելով (ԳՏՀ) Հայաստանի համար 2006թ. կազմել է 5.41 (առավելագույնը՝ 10), որի վրա բացասաբար է անդրադարձել «տեղեկատվական ենթակառուցվածք» բաղադրիչը՝ 3.81¹²: Երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը կբարձրացնի թողարկվող արտադրանքի մրցունակությունը՝ ապահովելով էլեկտրոնային կառավարման համակարգի կայացում, ինչպես նաև ավտոմատ կառավարման համակարգերի կիրառում արտադրության մեջ, և ներդրումներ ներգրավելու մեծ հնարավորություն կընձեռնի:

Անցումային տնտեսության երկրներում խիստ ռիսկային գործ է նորարարությունը: Հետազոտությունների արդյունքների համաձայն՝ առաջարկվող նորությունները անհաջողության են մատնվում.

- ✓ կյան սպառման ապրանքների շուկայում 40%-ը,
- ✓ արդյունաբերական նշանակության ապրանքների շուկայում 20%-ը,
- ✓ ծառայությունների շուկայում 18%-ը [10]:

ՀՀ տնտեսության արդյունաբերության ցածր գիտարարության աստիճանը և առկա մեծ տեխնոլոգիական խզվածքը վկայում են, որ երկրում գիտության և արտադրության համագործակցությունն անբավարար է: Պատճառը գիտության ֆինանսավորման ցածր մակարդակն է՝ ինչպես պետությունից, այնպես էլ արդյունաբերական հատվածից: 2006թ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը պետությունից կազմել են 1.2% (ՃՄՆ-ում՝ 6-7%), փոքր են նաև ՀՆԱ-ի նկատմամբ իրականացված գիտատեխնիկական աշխատանքների ծավալները՝ 2005թ. 0.4%¹³:

Չարգացած երկրներում պետությունը ստանձնում է գիտական ծախսերի 20-50%-ը: Գիտության ոլորտը նույնչափ ֆինանսավորում է ստանում նաև մասնավոր հատվածից:

ՀՀ-ում անբավարար է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից հետազոտական և ինովացիոն գործունեության նկատմամբ հետաքրքրությունը: Այդ է վկայում այն հանգամանքը, որ համապատասխան գրանցում ստացած նորարարությունների պատենտները գործնականում չեն իրացվել:

Գիտության և ինովացիոն համակարգի դանդաղ զարգացումը խիստ վտանգավոր է երկրի տնտեսության համար, քանի որ տեխնոլոգիա-

Առևտրային բանկերի ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքները Աղյուսակ 5.

	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Վարկերի տրամադրման համար (%)	31.6	26.7	21.1	20.8	18.6	18.0	16.5
Ավանդների ներգրավման համար (%)	18.1	14.9	9.6	6.9	4.9	5.8	5.8
%-ների միջև տարբերությունը (տոկոսային կետ)	13.5	11.8	11.5	13.9	13.7	12.2	10.8

Աղյուսակ 6.

Շինարարական գործունեության հիմնական ցուցանիշները 2001-2006թթ.¹⁴

	2001	2002	2003	2004	2005	2006
Իրականացվել է շինարարություն (ընթացիկ գներով, մլրդ դրամ)	110.4	166.6	237.8	276.4	435.1	623.1
աճի տեմպը (%)	106	145	141	115	141	137.1

կան ետամնացության խորացման պարագայում Հայաստանը կկորցնի ներդրումներ ներգրավելու հնարավորությունը եւ հետագա զարգացման հեռանկարը:

Գործարար բարենպաստ միջավայրի ապահովման նպատակով պետությունը ուղղակի վարչական միջամտություն է իրականացնում ոչ միայն հակամենաշնորհային օրենսդրության, այլ նաեւ օրենսդրական մի շարք ակտերի միջոցով: Մասնավորապես՝ արտադրանքը տարբեր տեսակի նմանակումներից եւ կեղծումներից պետությունը պաշտպանում է առանձին տեսակի գործունեությունները լիցենզավորելու օրենսդրական ակտերի միջոցով [4]: Հարաբերությունները, որոնք ծագում են, երբ պարտապանը ի վիճակի չէ ամբողջ ծավալով բավարարել պարտատիրոջ պահանջները, պետությունը կարգավորում է «Անվճարունակության եւ սնանկության մասին» օրենքով [5]:

Ձեռնարկատիրական ռիսկը նվազեցնելու նպատակով պետությունն իրականացնում է նաեւ անուղղակի կարգավորում՝ հարկերի, արտոնությունների, պետական պատվերների միջոցով:

Այսօր փոքր եւ միջին ձեռնարկություններում առավել զարգացած է առևտրային ռիսկը, իսկ մեծ ձեռնարկություններում մեծածավալ նախագծերի ռեպքում առևտրային ռիսկը նվազագույնի է հասնում հատկապես այն դեպքում, երբ որպես պատվիրատու հանդես է գալիս պետությունը: Դա առավել ակնհայտ է դրսևորվում խոշոր շինարարությունների ժամանակ, որտեղ տեխնոլոգիական պրոցեսը՝ օբյեկտի եզակիությամբ պայմանավորված, պահանջում է բարձր ուշադրություն: Նման դեպքերում մասնագետների կողմից, որոնք հաշվարկում են օբյեկտի եւ հարակից տարածքների փյուլզման ռիսկերը կանխելու միջոցառումների ամբողջ համալիրը, ռիսկերի կառավարումը կենտրոնացվում է տեխնոլոգիական առանձին օղակներում: Իսկ բուն շինարարության ընթացքում ռիսկերը նվազագույնի են հասնում տեխնոլոգիայի եւ տարրական տեխնիկական անվտանգության պահպանման շնորհիվ:

ՀՀ տնտեսության առաջատար ճյուղ դարձած շինարարության բարձր աճը շարունակվել է 2006թ.՝ կազմելով է 37.1%, իսկ շինարարության կշիռը նույն տարվա ՀՆԱ-ի աճում կազմել է 57.4%: Վերջին հինգ տարվա ընթացքում ճյուղի զարգացման միտումները դիտարկելիս պարզ է դառնում, որ 2002-03թթ. իրականացված շինարարության ծավալների աճը (միջինը 43%) գերազանցում է 2005-06թթ. համապատասխան ցուցանիշը (միջին 39%) (աղյուսակ 6):

Պատճառներից մեկը այդ տարիներին Լիսսի հիմնադրամի միջոցների հաշվին պետապատվերով իրականացված շինարարության ծավալներն էին:

Գործարար կյանքի վրա բացասաբար է անդրադառնում նաեւ ընդհանուր տնտեսական եւ քաղաքական անկայունությունը: Այս գործոնի ազդեցության մեծացումը բացատրվում է «բյուջեի համար պայքարի» եռուն շրջանով, երկրի տնտեսության մակրոցուցանիշների անորոշությամբ: Առհասարակ՝ տնտեսության մրցունակության ձեռքբերման համար պահանջվող ժամանակահատվածն ավելի երկար է, քան կոնկրետ քաղաքական իշխանության կառավարման ժամանակը: Եվ որպեսզի քաղաքականությունը չխոչընդոտի տնտեսության մրցունակության բարձրացումը, հաջորդ քաղաքական իշխանությունը պետք է որդեգրի իր նախորդի վարած քաղաքականությունը:

Այսպիսով, ինչպես բոլոր անցումային տնտեսություններում, այնպես էլ ՀՀ-ում ռիսկն ունի յուրահատուկ բնութագիր: Դա կապված է եւ՝ օրենսդրության հետ, եւ՝ տնտեսական համակարգի փոփոխության հետ, ինչը դժվարություններ է ստեղծում ոչ միայն տեղական արտադրողների, այլ նաեւ գլխավորապես օտարերկրյա գործարարների համար:

Անորոշության պայմաններում գոյատևում են այն կազմակերպությունները, որոնք առավել ճկուն են եւ շարժուն փոփոխվող շուկայական իրադրությունում: Այսինքն՝ շուկայում գործող ձեռնար-

կուն ժամանակակից պայմաններում եկամտաբեր գործ կազմակերպելու համար պետք է ունենա մասնագիտական լավ պատրաստվածություն, ինչպես նաեւ անհրաժեշտ գիտելիք՝ տնտեսագիտության, քաղաքականության, հոգեբանության, իրավագիտության, արտադրության կազմակերպման բնագավառներում, եւ կարողանա համագործակցել գիտնականների, մարքեթինգի մասնագետների, կապիտալի սեփականատերերի հետ:

Մի կողմից ձեռնարկատիրական ռիսկը ձեռնարկատիրական գործունեության համար վտանգ է, բայց մյուս կողմից, ինչպես մրցակցությունը, իրականացնում է մաքրող ֆունկցիա, այսինքն՝ շուկային օգնում է մաքրվել պակաս շարժուն կազմակերպություններից, նպաստում է տնտեսության զարգացմանը՝ ռիսկի նկատմամբ ճիշտ մոտեցում ցուցաբերելիս:

1. ՀՀ ԱԿԾ, ՀՀ տնտեսական վիճակի համառոտ վերլուծություն (2007թ. հունվար-դեկտեմբերի արդյունքներով)
2. ՀՀ ԱԿԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թվականի հունվար-մարտին
3. Աղյուսակը ըստ՝ Ինստիտուցիոնալ իրավիճակների գնահատումը մրցակցության եւ պետական աջակցության բնագավառներում, հուլիս 2007, AEPPLAC, էջ 14-15
4. Նույն տեղում, էջ 5
5. «Հայաստանի տնտեսական զարգացումներ» 2006, Տարեկան զեկույց, էջ 27, <http://www.aepplac.am/Reports/>
6. Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ
7. Աղբյուրը՝ ԱՄՆ, Եվրոպական կենտրոնական բանկ, ՀՀ ԱԿԾ
8. Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ
9. Աղյուսակը կազմված է ԱԿԾ-ի տվյալների հիման վրա՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թվականի հունվար-փետրվարին, էջ 86
10. Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ
11. Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ, ԿԲ
12. Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ
13. Աղբյուրը՝ <http://www.undp.org/>
14. Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ

Օգտագործված գրականություն

1. ՀՀ կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն, <http://www.minted.am/>
2. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, #112 (ընդունվել է 06.11.2000), <http://www.parliament.am/legislation.php>
3. «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, (ընդունվել է 09.04.2007), <http://www.parliament.am/legislation.php>
4. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, #193 (ընդունվել է 30.05.2001), <http://www.parliament.am/legislation.php>
5. «Սնանկության մասին» ՀՀ օրենք, #51 (ընդունվել է 25.12.2006), <http://www.parliament.am/legislation.php>
6. Рожков А., Хозяйствующие субъекты в современной России, Эко. 2002, #11, с. 96.
7. Радаев В., Российский бизнес: на пути к легализации?, Вопросы экономики, 2002, #1, с. 68.
8. Винтаева С., Кто не рискует, тот не движется, Новости рынка недвижимости, 2001, #25.
9. Рублевская Ю.В., Моделирование бизнеса в интернет-среде, Маркетинг в России и за рубежом, 2001, #2.
10. Бандурин А.В., Чуб Б.А., Стратегический менеджмент организации, <http://www.cfin.ru/management/>